



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Ե. Ի. Ք. Ա. Ղ. Ա. Ք. Ա. Կ. Ա. Ն.

36^{րդ} ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 10 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1887

ԹԻԻ 3893


ՄԱՐԿԱՆԱԿԱՆ ԿԸ ՈՐԱՏԱՐԱԿ-
ուի Ի Կ. Պոլիս, ամեն շաբաթ օր, եւ
ծեռքէ կը ծախուի 40 ՓԱՐԱՅԻ: Բաժա-
նորդագրութեան պայմանք են՝ Կ. Պոլսոյ
համար տարեկան կէս եւ վեցամսեայ՝
քառորդ Օսմ. ոսկի. գաւառաց համար
70 դր. եւ օտար երկրաց համար 15 Քը-
րանք: Բաժանորդագները դրկելու է առ
մատակարարութիւն Սրեւելքի եւ Մա-
սիսի, Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորատուէկ-
եան խան:

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Ազգ. Տեսութիւն. Համարատուութիւն նախորդ
Քաղաքական Ժողովոյ:
Յուշակ հայերէն ընտանիք (ՅՈՎ. Հ. Ք. Մ. Կ. Ն. Ա. Ն.).
Ի վերջին այդ. Քերթնում (Թ. Թ. Ե. Ն. Ա. Ն.).
Քննչութիւն. (ՏՕ. Ք. Պ. Ղ. Ս. Ե. Մ. Ի. Ն.).
Վէպ. Հայաստանի բարքեր. Սիսակ եւ Սոսոն, Բը-
ն. Նուրիեան սոխակներ. (Ղ. Պ. Ն. Ա. Պ. Ն. Ա. Ն.).
Քաղաք. Շաբաթական Լրոց. Արտաքին, Ներքին,
Ազգային:

ԿՈՏԱՆԱՆԻ ՊՈԼԻՊՈԼԻՍ, ՈՒՐԱԹ 9 ՀՈԿՏԵՄԲԵՐ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. ՏԵՍՈՒԹԻՒՆ



ՀԱՄԱՐՈՒՆՈՒԹԻՒՆ

ՆԱԽՈՐԴ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

Առիթ ունեցանք կարդալու նա-
խորդ Քաղաքական Ժողովոյ Համարա-
տուութեան տեղեկագիրը զոր մատու-
ցած էր առ Ազգային Երեսօխանու-
թիւն:

Այս տեղեկագիր կատարեալ հայելի
մէ ազգային ներկայ գործող վիճա-
կին: Նորա ընթերցումն ընդհանուր
առմամբ գոհունակութիւն կը պատ-
ճառէ մեզ, վասն զի նախ կը տեսնենք
որ Վարչութիւնն, իւր գիտակից իւր
պարտուց, Ազգային Ժողովոյն կը բերէ
իւր գործող համարն եւ այսպէսով բա-
ր՝ օրինակ կը հանդիսանայ ապագայ
վարչութեանց. երկրորդ կը պարզէ մեզ,
առանց ցուցամոլութեան, իւր կա-
տարած գործերն ինչպէս եւ այն խնդիր-
ներն որք անլոյծ մնալով բանակցու-
թեան մէջ կը գտնուին այսօր:

Ներկայ յօդուածով նպատակ չու-
նինք այդ համարատուութեան մէջ
մասնաւորութեամբ խնդրող վրայօք մեր
կարծիքն յայտնելու, վասն զի այդ կար-

գի խնդրող քննադատութիւնը կը վե-
րաբերի առօրեայ թերթերու. մեր մը-
տադրութիւնը կը կայանայ միայն ընդ-
հանուր կերպով խօսելու այդ տեղե-
կագրոյն վրայ:
Որովհետեւ տեղեկագիրն արդէն
երկու որոշ մասերու բաժնուած է,
ներքին եւ արտաքին, մեզ կը մնայ
այժմ քննել զայն այդ երկու տեսա-
կէտներով:

Ներքին ըսելով կը հասկնանք այն
խնդիրներն որք բոլորովին Ազգին ներ-
քին գործող կը վերաբերին. այս կար-
գի խնդրող մէջ Վարչութեան հետե-
ւած ուղղութիւնը մի կատարեալ գո-
հունակութեան արժանի է. երկուս-
տոյցի պատրաստութիւնն եւ Պատրի-
արքարանի դրամական վիճակի բար-
ւոյթումը, թաղային վարժարանաց մա-
սին պատրաստութեամբ կը թական հրա-
հանքն, իւր օրով մէկ քանի կարեւոր
կը թական հաստատութեանց հիմնա-
կութիւնը, կը թական եւ Տնտեսական
տեսչութեանց անուանումն, եւ որ ի
գլին, մեզ ցոյց կուտան թէ Վարչու-
թիւնն ո՛րչափ հոգածութիւն եւ խնամք
ունեցած է Ազգային Պատրիարքարանի
ներքին վիճակը զօրացնելու եւ նորա
իշխանութիւնն աւելի յարգելի ընծա-
յելու համար: Այս պէտք է լինի ըստ
մեզ ամէն Վարչութեանց նոյնպէս ա-
մէն հայ անհատի ուղղութիւնը:

Ներքին գործող մէջ Վարչութեան
պակասաւոր կողմն եղած է զբաղիլ ա-
ւելի կեդրոնի քան գաւառական գոր-
ծերով, մինչդեռ հակառակը պէտք
էր լինէր, զի գաւառք աւելի կարօտ են
մեր խնամող քան Պոլիսը: տակաւին ու-
նինք շատ տեղեր որք անհովիւ կը մնան.
մաղթենք որ այլ եւս այս սխալ ուղ-
ղութիւն վերջ գտնէ: Հայք Պոլսոյ մէջ
գաղթականութիւն մ'են միայն. եթէ
կը թենք եւ ուղղենք մեր գաւառացի
հայերն, այն ատեն կը գաղթին ամէն
տեսակ դժգոհութիւնը:

Դառով յարաբերական խնդրող, թէ
եւ ունինք այս տեսակետով կարգ մը
յաջողութիւններ արձանագրելու ի նը-
պատ Վարչութեան, բայց կը տես-
նենք որ այս յաջողութիւնք մէկ քանի
մասնական խնդրող համար են միայն,
մենք աւելին կ'ակնկալէինք Նուրեան
էֆէնտիի Վարչութեանէն. եթէ այս ա-
ւելին չէ կրցած ձեռք բերել, պատ-
ճառն ըստ մեզ այն է որ չենք գիտ-
ցած խօսիլ այն եղանակաւ զոր կ'ար-

տենեն մեզ մեր առանձնաշնորհմունք
եւ Սահմանադրութիւնն, երբ խնդիր
է պաշտպանել մի իրաւունք որ նուի-
րագործեալ է եւ կը վերաբերի մեր
եկեղեցւոյ հիմնական մէկ կէտին. այն
ատեն, վստահ մեր կառավարութեան
հայրական բարեյօժարութեան՝ պար-
տինք խնդիրն իւր ամենապարզ մեր-
կութեան մէջ ներկայել առ որ անկ է:

Բաց ի այս մէկ քանի ընդհանուր
գիտողութիւններէ, նոխորդ Վարչու-
թեան ներկայացուցած տեղեկագրոյն
մեր վրայ ըրած տպաւորութիւնը գո-
հացուցիչ է ընդհանուր տեսակէտով:

ԵՐԵՒԱՆ, 27 սեպտ.

Ս. Էջմիածնի Ճեմարանին տարեգարծը
կատարուեցաւ սեպտեմբերի 28ին Ս. Գէոր-
գայ տօնին օրը: Հանդիսաւոր ժամերգու-
թենք հետէ իջման խորանին վերայ Ս. Պա-
տարագ մատուցուեցաւ եւ յաւարտ Պատա-
րագի՝ Գեր. Օրմանեան Մաղաքիա Եպիս-
կոպոս, որ ժամարարն էր, նոյն տեղէն քա-
րոզ խօսեցաւ Էջմիածնի եւ նորա Ճեմարանի
վերայ, եւ վերջին դպրոցական տարւոյն վե-
րայ ալ մասնաւոր տեղեկութիւններ հաջոր-
գեց: Քարոզէն վերջ բոլոր միաբանութիւն
զգեստաւորեալ եկեղեցիէն դուրս ելաւ եւ
հանգուցեալ Գէորգ Գ. Կաթողիկոսի գե-
րեզմանին վերայ հոգեհանգստեան կարգ
կատարուեցաւ:

—Տերեկին միաբանական սեղանոյն վե-
րայ, Գեր. Զիւնական Թադէոս արքեպիս-
կոպոս, Կաթողիկոսի տեղակալ յատուկ բա-
ժակի առաջարկութիւններ ըրաւ, վասն Մա-
կար Կաթողիկոսի, վասն հանգուցեալ Գէորգ
Կաթողիկոսի եւ վասն Ճեմարանի, որք ընդ-
միջեան աշակերտաց յարմարաւոր երգերով,
Էջմիածնի է Հօրէ չարականն ըստ սովորու-
թեան բոլոր միաբանք յոտնկայս միաբերան
երգեցին:

—Երեկոյեան ժամերգութեան Կաթողի-
կոսն հանդիսաւոր եկեղեցի իջաւ, որ լի
էր ուխտաւորաց բազմութիւնով:

—Ընթերցէն յետոյ աշակերտք Վեհա-
րանի առաջ ժողովուելով յատուկ երգեր նը-
ուագեցին:

Ց Ո Ւ Ց Ա Կ
ՀԱՅԵՐԷՆ ԸՌԱՂԱՄԻՆ

ԲԵՐԱ, 5 Հոկտ.

Այս օրերս մի փոքրիկ Տեւորակ ձեռքս անցաւ, որ ո՛չ նախադուռ և ոչ վերջաբան յիշատակարան ունենալով, յայտնի չէ թէ ո՛ւր, կամ յորո՞ւմ տալարանի, եւ կամ ո՞ր թուականին տպուած է:

Ըստ ամենայն հաւանականութեան իմ կարծիքս է, թէ այս Տեւորակ տպագրուած է ի Կ. Պոլիս, ի ժամանակի մեծանուն զըրագէտ Նալեան Յակոբ Պատրիարքի (1757-1764), և նոյն իսկ նորա հեղինակութեամբ, որոյ պարունակութիւն հետեւեալք են.

1. Տաճկերէն լեզուաւ մի ճառ 1-25 երես առանց վերնագրի, որով կը հաստատէ թէ Քրիստոսի Տեառն մերոյ ծնունդը յունվարի 6ին եղած է, եւ ո՛չ գեկտեմբերի 25ին: Այս ճառ մի ուրիշ անգամ եւս տըպուել է, քանզի այսպէս գրուած է ճառէն վերջը. «Բայց ընդդէմ այս տպագրեալ ճառիս մերոյ՝ Պատրի մի ի կարգէ ճիշդութեաց, եւ ծայրագոյն աստուածաբան Ղալաթիայոյ, երկար, ծիծաղելի եւ անհասկանալի պատասխանի մի գրեալ է». զոր համառօտ բայց իրաւացի վկայութեամբ հերքելով, այսպէս վերջ տալ բանիցն. «Եւ սակայն Պատրի ճիշդութիւն զայսպիսի յայտնի ճշմարտութիւնս ուրանայ ի մէջ պատասխանոյն իւրոյ, եւ այսպէս պատրէ եւ խաբէ ի միջօրէի... և եւ կոյր անթարմայս») ազգին մերոյ:»

*) Սխալմբայ բառը տաճկերէն է եւ կը նշանակէ մէկ տեղէ կամ անօթէ ուրիշ տեղ փոխադրել, եւ երկրորդ՝ ուրացում, զոր հաւատարիմ հայը կուտային իրենց կրօնը փոխող եւ ուրացող պապական հայերուն:

2. «Կտակ չարչարանաց եւ խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» դարձեալ տաճկերէն լեզուաւ. երես 27-49:

3. «Տեալ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին» տաճկերէն. երես 50-58:

4. Տեւորակն այսպէս վերջանալէ զկնի ի նորոյ կը սկսի 1-13 երես. «Յուցակ հայերէն ընալումին», զորմէ պատուական Մատթիոյ միջոցաւ տեղեկութիւն տալ պատշաճ համարեցայ ի զբօսանս բանասիրաց:

Յայտնի է արդէն որ մեր այբուբէնն յատուկ թուանշանի զօրութիւնն ունի, ինչպէս՝ Ա էն մինչեւ Թ միաւոր, Ժ էն մինչեւ Ղ տասնաւոր, Ճ էն մինչեւ Ջ հարիւրաւոր և Ռ էն մինչեւ Ք հազարաւոր, և մեր նախնիք այս տառերով ցուցած են շատ կամ սակաւ թիւեր, օրինակի համար ՃՌ կը գըրէին և հարիւր հազար կը կարգային: Այսպէս մեր հայոց տօմարական թուականն եւս մինչեւ ցարդ այս տառերով կը գրուի ինչպէս ներկայ թուականն ՌՅԼՁ (1356): Եւ մեր վաճառականք իսկ մինչեւ սոյն դարուս սկիզբները սոյն տառերն իբրեւ թուանշան կը գործածէին իրենց տետրակներու եւ նամակներու մէջ: Բայց որովհետեւ անկարելի է այս գրերն վերէն ի վար շարեւով թուանշանաց պէս միմեանց վերայ բարդել եւ գումարել, խնդիր էր գիտնալ թէ հայկական տառերով ի՞նչպէս կը գումարէին թիւեր եւ կամ կը բազմապատկէին: Ահաւասիկ սոյն խնդրոյն լուծումը կուտայ մեզ սոյն տետրակի նշանակած ձեւն, և կը դիւրացնէ ամեն գծաւարութիւն, փոխանակ թուանշանաց զրօյնն այս — գիծը գործածելով:

Յաւալի է որ մինչեւ ցայսօր նոյն պատրիզ եւ խաբող ճիշդութիւններն, եւ նոյն պատրեալ ու խաբեալ անթարմայք անպակաս եղած են մեր ազգէն, որոց դարձ եւ զղջում կը մաղթեմ:

Ծելով, որով իսկ եւ իսկ Արաբական կամ Եւրոպական թուանշաններու նման ամեն թուաբանական գործողութիւն կը կատարէ:

Իմ մասնաւոր կարծիքն է դարձեալ, թէ տետրակին նշանակած այս ձեւն, ի նախնեաց մերոց յաջորդաբար առ մեզ հասած յիշատակ մի է, եւ ո՛չ թէ ժէ կամ ԺԼ ողջարու գործ. եւ եթէ այլք յետին դարու գիւտ եւս համարին զայն, դարձեալ մեզ համար յարգելի է եւ սիրելի եւ նախանձելի իսկ. որովհետեւ մինչդեռ մեք այժմ ամեն բան օտարի փետուրներով կ'ուզենք զարդարել, մենք մի կամ երկու դար յառաջ, մեր նախնիք բուն ազգային կերպարանքով ուղեր են գործածել եւ աւանդել իրենց զաւակաց: Ահա՛ չափ և կշիռ ազգասիրութեան եւ օտարասիրութեան մերում:

Ընդ թղթոյս կցելով տետրակին ցուցադրել, խնդրեմ առաջին պատեհաւ հրատարակելու շնորհ ընէք, եւ ընդունիք իմ շնորհակալութիւնս:

Աղօթարար
ՅՈՎՀ. ՔԶ. ՄԿՐԵԱՆ

Հետեւեալ տողերն ափ յափոյ գրուած են կիրակի առաւօտ՝ անտառախիտ եւ ծովահայեաց աստառան. դէ մը արշալուսոյ ծագումը դիտելով՝ ակնարկութեամբ նոյն օրուան համար սպառնացեալ ահարկու սասանութեան:

Հեղինակը զայն կը նուիրէ սիրալիր յարգանքոյն Աշուղազարմ Օրբորդին որում եօթնեկաւ յառաջ քերդուած մը խոստացեր էր:

Ի ՎԵՐՁԻՆ ԱՅՔ

Ինչո՞ւ ամենէն հրապուրիչ ժպտովդ՝ Գո ամենէն թարմ վարդը վարսիցդ ի հիւսնի կոյս օգային՝ արթնցած՝ գգուես փափկիկ թեւերով դիմ արտեւանաւոր:

Արդեօք յամբեւ զօղջոյն քո յետին ժըպիտներո՞ւ տակ արցունքը ծածկես. թէ խաբեպատիր ցոյց մ'է այն կուսի Որ մերձ ի մասնել ժպտի առ երես:

Այո՛. այսօր իսկ իւր շող շրջանին Կէսն հազիւ հասած գունդն արիւնոյ հրեղէն՝ Բոցասփիւռ մրրիկը՝ ստնձերնին փշրած՝ Արշաւեն սիտի երկրիս կեդրոնէն:

Եւ չէնք և ոստանք քանդեալ Հիմն յարե Տապալեալ լեռանց տակ պիտի ընկճին, Եւ տագնապեալ ծովը՝ հրատէն հալածեալ՝ Դաշտերն ու ձորեր պիտի յարձակին:

Նենգժող դահլիճին մէջ հաւաքեալ ծերք Մեքենայելով թակարդս օսոխին՝ Եւ պատերազմաց ի դաշտ բանակներ Իրարու վըրայ հրօսեալ զայրադին,

Ամէնքն իրարու գիրկն ինկած յանկարծ Նոյն ցնցմամբ ու ահիւ, և նման մահուամբ՝ Սոսկալով հուսկ աչք մը պիտի նետեն ի մահագոյժ կռիւ տարերց ապստամբ:

Բայց երբ յաւերակ փոխուի դունդն համայն Եւ հեծութեանց իսկ դադրի ձիւ յետին, Եւ երկիրս ի հոյս աստեղց անդ շրջի ինչպէս որդեհպան՝ դ կամարօք բանտին,

Ո՛վ այդ՝ դու դարձեալ յեղերց անդ երկնի Պիտի բարձրանաս նոյն թարմ վարդերով՝ Թէպէտ քո նըշոյլք յաւերակս կաթին՝ Եւ ոչ որ գալուստդ ողջունէ սիրով:

Թ. ԹԵՐԶԵԱՆ

Ց Ո Ւ Ց Ա Կ ՀԱՅԵՐԷՆ ԸՌԱՂԱՄԻՆ

ա	1	աա	11	բա	21	ա--	100	ադ-	130	բբ-	220
բ	2	աբ	12	գ-	30	ա-ա	101	ադ-	140	գ--	300
գ	3	ադ	13	դա	31	ա-բ	102	աե-	150	դ--	400
դ	4	ադ	14	դ-	40	ա-գ	103	ադ-	160	ե--	500
ե	5	աե	15	դա	41	աա-	110	աէ-	170	դ--	600
զ	6	ազ	16	ե-	50	աաա	111	աը-	180	է--	700
է	7	աէ	17	դ-	60	աաբ	112	աթ-	190	բ--	800
բ	8	աբ	18	է-	70	աբ-	120	բ--	200	թ--	900
թ	9	աթ	19	բ-	80	աբա	121	բ-ա	201	ա---	1000
ա-	10	բ-	20	թ-	90	աբբ	122	բա-	210	ա--ա	1001

(Պէտք է միշտ ըմբռնել ի մոռի թէ այս — գիծը զրօ է).

Լին Լին

« Եէքիւն »	(Գումար)
457	դեէ
2,030	բ-դ-
46	դդ
12,000	աբ---
721	էբա
15,254	աեբեդ

« Եէքիւն »	(Գումար)
4,537	դեդէ
9,251	թբեա
3,946	դթդդ
7,294	էթթդ
2,421	բդբա
27,449	բէդդթ

« Եէքիւն »	(Գումար)
22,040	բբ-դ-
9,004	թ--դ-
40,600	դ-դ--
53,208	եդբ-ը
4,080	դ-ը-
549	եդթ
6,901	զթ-ա
136,382	ադդդբ

« Եէքիւն »	(Գումար)
5,781	եէբա
8,652	ըդբբ
6,195	զաթե
5,986	եթըզ
1,285	աբբբ
27,899	բէթթթ

ՔՆԱՅՐՋՈՒԹԻՒՆ

(SOMNAMBULISME)

Քնաչըթութիւնն երկու տեսակ է, Ա. ակնբաց քնաչըթութիւն (somniaambulisme yeux ouverts), Բ. ակնփակ քնաչըթութիւն (somniaambulisme yeux fermés). Թէպէտ և այս երկուքն ալ մի եւ նոյն վիճակի կը վերաբերին, բայց եւ այնպէս յաճախ տարբեր հանգամանքներ ներկայացնելուն համար, պատշաճ կը դատեմ առանձին առանձին նկարագրել:

ԱՎԵՓԱԿ ՔՆԱՅՐՋՈՒԹԻՒՆ

Այն ամէն եղանակներն որ քնաթմբութիւն կը պատճառեն՝ կարող են հաւասարապէս քնաչըթութիւն յառաջ բերել, կը յաւելումը նաեւ թէ ուշաքարձելի անձանց վրայ քնեթութեան սոյն վիճակը քնաթմբութեանէ աւելի յաճախ կը տեսնուի:

Քնաչըթութիւնը կը ծնի նաեւ երկրորդապէս ուշաքարձութեան հետեւանք ըլլալով, կողմից կախուցմամբ, կամ ակնային գնդից վրայ լէ՛լէ՛սապէս փշելով, եւ կամ քնաթմբութեան անձը կառաւարկացուման ենթարկելով:

Ակնփակ քնաչըթիւնն անշարժ կը թուի, եւ գոգցես իմն արտաքին իրաց անգգայ, Գլուխն ընդհանրապէս ուսոց միոյն վրայ հակեալ է, այսու հանդերձ անդամը լուծման մէջ չեն, եւ այս ամենայն առ երեւոյթ տեսիլ մ'է, քանզի եթէ խօսք մը ուղղենք, անմիջապէս գլուխը վերցնելով պատասխան կուտայ, եւ եթէ հրամայենք՝ իսկոյն օտից վրայ կը կանգնի, կը քայլէ եւ զոր ինչ կամիք՝ կէտ առ կէտ կը կատարէ:

Աչքերը մերթ կատարեալապէս փակեալ են եւ կուպերն այն թեթեւական շարժմամբ ոգեւորեալ զոր արդէն քնաթմբութեան մէջ նշմարեցինք, իսկ մերթ երկու կողմից միջեւ ամենափոքր եւ գրեթէ անտեսանելի ճեղք մը միայն կը մնայ, որոյ արդեամբ ենթակայն յարտաքին առարկայից զանազան տըպաւորութիւններ կը կրէ:

Մորթը ցաւոց անգգայ է, այսու ամենայնիւ, կան հազուադէպ պարագայներ յորում մորթը մասնաւոր գերգգայութիւն մը կը ստանայ քերթութեան համար: Ա. զամ (Revue de médecine. 1860) կ'աւանդէ մեզ օրիորդի մը պատմութիւնն որոյ կանակին վրայ քառասուն կամ յիսուն հարիւրդամէթը հեռաւորութեամբ ձեռք մը բռնուած պահուն, տաքութիւն կը զգար:

Մասնական զգայարանաց կողմանէ ալ գերգգայութիւն մը կը նշմարուի, եւ այս գիւրագգայութիւնն երբեմն այն աստիճան առաւելութիւն կը ստանայ որ յաճախ հըրաշալի եղելութեանց սկզբնակէտ մը կրնայ ըլլալ, եւ այսպէս քնաչըթիւն իւր աչաց առջեւ դրուած առարկայները կը տեսնէ այն անձուկ ճեղքին մէջէն եւ առանց վրիպանաց նոցա անունները կը թուէ:

Երբ կուպերը բոլորովին բաց են (ինչպէս ակնբաց քնաչըթութեան մէջ), ենթակային աչքերն աւելի դիւրագլած են, եւ հետեւեալ փորձն որակնութեան արտաքոյ կարգի սաստկութիւնն երեւան կը հանէ մեզ:

Այլտակ թղթէ ութ կամ տասն մանրիկ բառակուսիներ շինելէ յետոյ, միոյն վրայ անհատկապի նշան մը կ'ընենք զոր փորձողը միայն կարողանայ նշմարել. այս փորձիկ բառակուսին ենթակային ձեռքը կը յանձնենք ըսելով որ լուսանկար մի է, եւ յետոյ միւսներուն հետ կը խառնենք: Հա-

կառակ այն ամենայն ճգանց որով կը նշանը մոլորեցնել, քնաչըթիւն միշտ կարող կ'ըլլայ այն երեւակայեալ լուսանկարն որոշել:

Պէտքէր քնեացեալ ուսանող մը տեսաւ որ ի խաւարի բազում էջեր կ'ընթեռնուր, մինչդեռ արթուն վիճակաւ տառ մի եւ եթէ չէր տեսներ:

Այս վայրկեան Բարիզու հիւանդանոցներէն միոյն մէջ արգանդախեղդային կուրութենէ (cécité hystérique) բռնուած հիւանդ կին մը կայ որ ինքնածին քնաչըթութիւն ունեցած պահուն տեսողութիւնը կը վերստանայ:

Լսելեաց գործարանն ալ հաւասարապէս գերգգայուն է. երկու կամ երեք մէթր հեռաւորութենէ ենթակայն ժամացոյցի մը հնչիւնը (թիւթաթ) կը լսէ:

Տօթթէօն Պրէմօն կը պատմէ թէ քնաչըթիւն մը երեւոյթն պատուհանին քով կեցած միջոցին, փողոցին միւս ծայրը կնկան եւ գործաւորի մը միջեւ եղած խօսակցութիւնն ամբողջովին լսած էր:

Հոտոտեղեաց գործարանն ալ այս եղանակն երեւոյթները կը ներկայացնէ: Եթէ ենթակայի մը ռնգաց ըով թուղթ մը մօտեցնենք, զոր նախապէս երկվայրկեան մը միայն խնկալից սրուակի մը վրայէն անցուցած ըլլանք, քնաչըթիւն իսկոյն հոտը կ'առնու եւ մինչեւ անգամ տեսակին առնուը կուտայ:

Ակամայ այս գերսրութեան (hyperacuité) մասնական գործարանաց, յուշարարութեամբ կրնանք ցնորական տեսիլներ, կեղծ զգայութիւններ, պատրանք յառաջ բերել:

Այս երեւոյթից քով կը դասակարգենք նաեւ իմացականութեան գերսրութիւնը:

Պրէմօն կը հաղորդէ մեզ թէ իւր ազգականներէն պատանի մը, շատ յարմարութիւն չ'ունենալով հանգերձ ուսողական գիտութեանց, քնաչըթական վիճակաւ ամենայն դիւրութեամբ կը լուծէր եռանկիւնաշափական ամենադժուար խնդիր մը: Այս եղելութիւնները տեղի կ'ունենան նաեւ ինքնածին քնաչըթութեանց մէջ. արգարեւ այս դասու կը վերաբերին այն համարէն քնաչըթիւններն որ ի զիշերի իրենց պարտականութիւնները կատարելէ յետոյ, յառաւտուն զարմացեալ կը հիանան անոնց վերայ: Վայնհօլտ եկեղեցականի մը դէպքը կը պատմէ, որ քնաչըթութեան ժամանակ այնպիսի քարոզներ եւ ատենաբանութիւններ կը շարագրէր որ իւր իմացական կարողութենէ յոյժ վեր էին:

Քնաթմբութեան առթիւ մեր նկարագրած ջղամկնային գերգգականութեան երեւոյթները տեղի կ'ունենան նաեւ քնաչըթութեան մէջ:

Գալով մորթի մակերեւութային գրգռմանէ ծնեալ կարկամութեանց, սորա եւս հաւասարապէս տեղի կ'ունենան միմիայն ուշաքարձելի քնաչըթիւններու մէջ: Այս կարկամութիւններն արթուն վիճակաւ բացարձակապէս չեն մնար. երբ փորձողի կողմանէ անհետացեալ իսկ չ'ըլլան, ենթակայն զարթնելէ յետոյ ինքնին կը փարատին:

Քնաչըթիւն յիշողութիւնը լիովին անարատ եւ անեղծ կը մնայ, եւ յաճախ իւր կենաց մանրակրկիտ պարագայներն անգամ կը պատմէ նա ամենայն ճշգրտութեամբ: Պրէմօն կ'աւանդէ մեզ կնկան մը դէպքն որ Աստուածաշնչէն երրայեցերէն լեզուաւ ամբողջ գլուխներ կը վերծանէր, զորս մանկութեան ժամանակ եկեղեցականի մը քով կեցած ատեն լսած էր:

Ռիչէ կը յարէ թէ քնաչըթիւն մը Africaine գուսաներգութենէն ընդարձակ կտորներ կ'երգէր, հեղ մը միայն լսած ըլլալով հանգերձ: Սոյն ազգի եղելութիւնը յոյժ շատ են, եւ հետեւեալ փորձն որ վերոյիշեալ եղելութեանց շատ կը պատշաճի՝ կրնայ գիւրութեամբ ի գործ դրուիլ: Քնաչըթիւն անձի մը ըով մատենէ կամ լրագրէ մը քանի մը պարբերութիւն կ'ընթեռնուր, եւ երկու երեք օր յետոյ զայն քնեացնելով կը տեսնենք՝ թէ կէտ առ կէտ կը կրկնէ նոյն պարբերութիւններն:

Բարիզու երեւելի բժիշկներէն Շարքօ տարօրինակ դէպք մը հաղորդած է Ակադեմիոյ (Progrès médical. 1883), որ յիշողութեան եւ տեսողութեան վերջին աստիճան գերսրութիւնը կը հաստատէ:

Քնաչըթիւն առջեւ մի քանի թերթ թուղթ ղնելով կը հրամայենք որ մեր տունտունութեան ներքեւ գրէ. երբ առաջին թերթին վրայ չորս-հինգ տող գրէ, զայն արագութեամբ մը քաշելով կ'առնուր. ենթակայն առանց անդրադառնալու կը շարունակէ երկրորդ թերթին վրայ գրել՝ սկսելով ճիշդ այն կէտէն ուր ձգած էր նախընթաց թերթը: Միւսնոյն կերպով կը վերցնենք երկրորդը, երրորդը, չորրորդն. երբ հինգերորդը լմնայ, կը հրամայենք որ ծայրէ ի ծայր կարգայ եւ սէտք եղած տեղերը կետագրէ: Ենթակայն վերջին թերթին վրայ ամբողջը կ'ընթեռնու զարմանալի կանոնաւորութեամբ եւ ճշգրտութեամբ, առանց բռն մի եւ եթէ զանց առնուր, Յիշողութեան այս գերսրութիւնն ուրիշ խել մը պարագայից մէջ նաեւ կը տեսնուի: յիշենք նաեւ ակիտին, հաշիշը, բլորածեւը (chloroforme), որք յիշողութեան վրայ մասնաւոր գերսրութիւն մը կը գործեն:

Մաթիաս Տիւվալ (Nouv. dict. de médecine, hypnotisme) կը գրէ թէ ծերունի անտառապահ մը Բոլոնիոյ սահմաններուն վրայ անցուցած էր գրեթէ իւր պատանեկութեան օրերն, եւ յետոյ գերմանական երկիրներ բնակած էր: Իւր զաւակները վերկայեցին որ քառասուն տարինրէ ի վեր բոլորեական բառ մի եւ եթէ ոչ լսած եւ ոչ ալ արտասանած էր. արդ բլորածեւի արդեամբ յառաջբերեալ անգգայութեան (anesthésie) միջոցին, որ գրեթէ երկու ժամուան չափ երկարեցաւ, այս անձը միմիայն բոլորական լեզուաւ աղօթեց, գոչեց, երգեց: Խել մը հիւանդութիւնը միւսնոյն արգիւններն արտադրած են:

Թիպօ (Loc. cit. p. 145) կը պատմէ թէ չորս տարեկան մանուկ մը՝ զանկի բեկման (fracture de crâne) համար շաղափման գործողութեան (opération du trépan) ենթարկուելով բժշկեցաւ: Գործողութեան մանրամասնութիւնները մոռացած էր, երբ տասն եւ հինգ տարիէ յետոյ տենդէ բռնուելով զառանցանք մը ունեցաւ, եւ մի եւ նոյն պահուն իւր մօրը կը նկարագրէր իւր գանկին վրայ տեղի ունեցած գործողութեան մանրակրկիտ դէպքերն:

Վերջապէս յիշենք Պրօն Սէքարի գրածն, յորում Ձինչինաղի բժիշկ մը ուղեղային արիւնահոսութեան համար (hémorrhagie cérébrale) անխօս եղած էր (aphasique), մինչդեռ երազած պահուն ամենայն դիւրութեամբ կը խօսէր:

Ըսենք ուրեմն որ քնեական այս վիճակին մէջ ենթակային հետ կրնայինք հաղորդակցութեան մէջ մտնել. բաց աստի քնաչըթիւնն ո՛չ միայն փորձողի այլ նաեւ զինքը չըջապատող հանդիսատեսներու տրամա-

դրութեան ներքեւ կը գտնուի, իբր կրա-
ւորական գործի մը կուրորէն կը հնազանդի-
նոցա թելադրութեանց եւ փոքրիկ ընդ դի-
մութիւն մը եւ եթ չ'արտայայտեր, այլ եր-
բեմն սակաւատեւ վարանում մը որ իսկոյն
կը փարատի:

Այս վիճակաւ քնաչըլիկն, իբր ինքնա-
շարժ մեքենայ մը, զանազան հրահանգաց
ներքեւ կարող է մինչեւ անգամ ոճիրներ
եւ իրեն բարոյականութեան եւ գաղափա-
րաց բողբոլին հակառակ գործեր տեսնել:
Այս պարագայից մէջ ենթակայից մարմնա-
կան ոյժը կը տառնապատկի, եւ մերթ յոյժ
գոյնաւորութեամբ կարող կ'ըլլանք սանձել
զայն: Երբեմն արտաքին բանի ոյժն ալ չը
բաւականանար արգիլելու եւ փորձողն ըս-
տէպ խռովեալ կը մնայ եւ չի մտածեր որ
գաղափարն զրայ շփում մը ենթակայի վի-
ճակը կը փոխէ, եւ որով անկարող կ'ըլլայ
փաստելու: Այս կրաւորականութիւնն որ
առ երեսս բացարձակ կ'երեւայ մեզ՝ ունի
իւր հազուադէպ գարտուղութիւններն որ
ենթակային անձնական մասնաւոր կանխա-
պատրաստութիւններէն կախում ունին:

Գալով ռաւիկն մէջ համարում ստացած
գաղափարին՝ թէ քնաչըլիկն իւր գաղտ-
նիքներն առ հասարակ երեւան կը հանէ,
կը փութամ յարեւ թէ սոյնազգի եղելու-
թեանց մէջ չափազանցութիւն կայ, եւ թէ
ենթակայից ունիք իրենց կենսագրութիւնն
ընելու բացարձակապէս կը գոյնաւորուի:
Ժիւրիէնցի, եւ Տըմարէի հետեւեալ դէպքը
բոլորովին եղական է. բաղադրացի տիկին մը
քնաչըլիկ վիճակաւ՝ բոլորովին գտնուող
բժշկաց իւր անձին եւ ընտանեաց վերա-
բերեալ այն ատիճան ծանր յայտնութիւն-
ներ ըրաւ որ պատասխանատուութենէ զերծ
մնալու համար ստիպուեցան զայն սթափե-
ցնել:

Քնաչըլութիւնն ալ ուշաբարձութեան
նման անշատեղով կրնանք մարմնոյն մէկ կող-
մին վրայ միայն յառաջ բերել. եղանակն
ամենապարզ է. բաւական է քնաչըլիկն ակ-
նային գնդից միոյն վրայ թեթեւ ճնշում մը
ընել: Եւ եթէ նոյն պահուն հրահանգներ
կիսաքնաչըլեալ (hémisomnambulisme) կող-
մի թեւը կամ սրունքը վերամբառնալ, ա-
մենայն դիւրութեամբ կը կատարէ, մինչ-
դեռ հակառակ կողմի անգամներն անշարժ
կը մնան. բայց եւ այնպէս մերթ կ'իսու-
շաբարձեալ կողմի անգամը շարժելու հա-
մար ենթակային կողմանէ եղած ճիգն ան-
պտուղ չի մնար, որովհետեւ ուղեղի քնա-
չըլեալ կիսաղնդին ընդունած շարժիչ գըր-
դումը (excitation motrice) դեռեալ մարմ-
նոյն (corps calleux) կցուածիչ նեարդից
(fibres commissurantes) միջոցաւ կիսուշա-
բարձեալ կիսաղնդին փոխանցելով սկզբնա-
շարժում մը տեղի կ'ունենայ: Պարտէ մեզ
յարեւ նաեւ որ միակողմանի քնաչըլութեան
երեւոյթներն ուշաբարձելի անձանց վրայ
միայն կը նշմարուին:

Ակնբաց քնաչըլութիւնը կը դադրի կամ
ենթակայն զարթնելով կամ քնէական վիճակը
փոխելով: Զարթումն ինքնաբերաբար կըր-
նայ ըլլալ, բայց եւ այնպէս յաճախ ակնա-
յին գնդից վրայ փշելով եւ կամ պարզա-
պէս յուշարարութեամբ, եւ մերթ վերին
կողմերը միայն բանալով կ'ըլլայ:

Փշումը թեթեւ եւ երկարաձիգ պարտ է
լինել, քանզի հակառակ պարագայի մէջ են-
թակայն փոխանակ զարթնելոյ, ուրիշ վիճակ
մը կ'ստանայ, (ուշաբարձութիւն կամ ա-
կընբաց քնաչըլութիւն): Իսկ երբեմն ըը-
նաչըլիկն այն աստիճան զգայուն է որ ա-

մենաթեթեւ փշելն իսկ իւր վիճակը կը
փոխի, եւ յայնժամ պարզ յուշարարու-
թեամբ, կամ ուշաբարձական վիճակի վե-
րածելէ յետոյ, կ'սթափեցնենք: Ինչպէս
համարէն քնէական վիճակաց, նոյնպէս նաեւ
քնաչըլութեան մէջ ալ գտնուող ենթա-
կայն, յետ զարթման, ամենայն ինչ մոռա-
ցած է:

Լուսաւոր միջավայրի մը մէջ ուշաբար-
ձելի անձանց կողմից վերաբարձումն ուշա-
բարձութիւն յառաջ կը բերէ, իսկ ոչ ու-
շաբարձելի անձանց վրայ ակնբաց քնաչըր-
ջութիւնն անխուսափելի հետեւանք մ'է:

ԱԿՆԲԱՑ ՔՆԱՇՐՋՈՒԹԻՒՆ

Ակնբաց քնաչըլութիւնը մեզ քանի մը
մասնաւորութիւնք ներկայացնելուն համար,
պատշաճ դատեցիք երկտող եւս զոհել:

Այս վիճակն ոչ երբէք առաջնական է,
այլ միշտ նախընթաց վիճակի մը հետե-
ւանք. եւ ստէպ ակնիմակ քնաչըլութեան
կը յաջորդէ եւ բաւական է ենթակային կո-
պերն վեր ամբառնալ:

Մերթ, կառափնացողացման միջոցաւ,
ուշաբարձութեան հետեւանք ըլլալով կը ծնի:
Վերջապէս կողմից վրայ փշելով քնաթմբու-
թիւնն ալ կրնամք ակնբաց քնաչըլութեան
վերածել:

Ակնբաց քնաչըլութեան մէջ աչքերը
լայնօրէն բացուած եւ կողմերը բարախման
շարժմամբ մը ոգեւորեալ են:

Ակնային գունտերն չունենալով հանդերձ
ուշաբարձական վիճակի անշարժութիւնը,
զոգցես իմն աւելի դաժան եւ խիստ նայ-
ուածք մը ունին, այսու հանդերձ ենթա-
կայից ունեց վրայ դէմքի փոփոխում չը
նշմարուիր. եւ այն աստիճան բնական կեր-
պարանք մը ունին որ յաճախ կեղծ վիճակ
մը կը կարծեմք:

Մորթի անզգայութիւնը մշտակայ է.
նոյնպէս նաեւ մասնական գործարանաց
գերզգայութիւնն, եւ կողմից բաց ըլլալուն
պատճառաւ տեսանելաց զգայարանքն ալ
աւելի դիւրութեամբ կ'զգացուի արտաքին
ազդեցութիւններէ:

Զղամկնային գերզգոտականութենէ եւ
եւ մորթի մակերեւութային գրգռմանէ
յառաջ բերեալ կարկամութիւնք, այս վի-
ճակաւ ալ մշտակայ են, այս տարբերու-
թեամբ որ, վերջինները ուշաբարձելի ան-
ձանց վրայ միայն տեղի կ'ունենան:

Ակնբաց քնաչըլիկն իւր գտնուած տեղ-
ւոյն եւ զինքը շրջապատող անձանց վրայ
տեղեկութիւն չունի. բաց աստի, ինքնա-
բեր պատրանքներ ալ կը ներկայացնէ. օրի-
նակի աղագաւ, ենթակայ մը զինքը լու-
սաւորեալ դահլճոյ մը մէջ կը կարծէ, միւ-
սըն անտառի մը ծառոց հովանոյն ներքեւ,
ուրիշ մը գետակի մը շուրջը եւ:

Ակնիմակ քնաչըլութեան մէջ տեսանք որ
փորձողի կողմանէ քիչ շատ հրահանգում
մը պէտք էր, մինչդեռ ակնբաց քնաչըլիկն
առանց երրորդ անձի մը հրահանգը ըս-
պասելու, ինքնաբերաբար կ'ընէ, կը բա-
լէ, կը վազէ, մերթ փորձողի թելադրու-
թեանց ընդդիմակելով:

Հետեւեալ դէպքը Տր. Պոթէյ աւան-
դած է մեզ, որ ինքնածին պատրանաց օ-
րինակ մը կրնայ ըլլալ.

Երկու օրիորդ Մարի Թ. եւ Գ. Շ. ա-
կընբաց քնաչըլութեան ենթարկուելէ յետոյ
ընդարձակ սրահի մը մէջ կը ձգուին:

Առաջին իսկոյն մարգագետնի մը վրայ
կը կարծէ ինքզինքը, որովհետեւ կը գոչէ.
ո՛հ ինչ գեղեցիկ ծաղիկներ, եւ կը խո-

նարհի փունջ մը քաղերու համար: Այս մի-
ջոցին երկրորդը կը շրջագայի եւ կը կար-
ծէ որ ցեխերու մէջէն կը բալէ, որովհետեւ
զգուշութեամբ զգեստից ծայրերը վեր
կ'առնու:

Քիչ ժամանակ յետոյ երկու քնաչըլիք դէմ
առ դէմ կուգան եւ իրարու ճանչուորու-
թիւն ընելէ վերջը կը միասին կը շարունա-
նակեն իրենց շրջագայութիւնը բարձրագոյն
խօսակցելով: Ճամբան վտակի մը մօտ կը
հասնին. մին օձ մը կը տեսնէ եւ կ'ուզէ
խոյս տալ, մինչդեռ ընկերուհին արիւն-
թեամբ յառաջ կ'ընթանայ եւ կ'ապանէ
գարշիկի սողունը. քիչ մը վերջը իբրեւ թէ
վաստակեալ, կը բազմին դալարներու վրայ
եւ օրիորդ Գ. Շ. ոտքերն ալ կը լուսայ:

Այս վայրկեան տեսարանի ներկայ գըտ-
նուող անձերէ մին դէպի անոնց կը յա-
ռաջանայ եւ կ'ուզէ խօսիլ. Մ. Թ. իսկոյն
պատրանք մը կ'ունենայ, կը թուի իրեն թէ
այս անձը անտառաց պահապանն է եւ ըս-
պանալեօք կը գովամակի իրենց հոն նըս-
տելուն: Երկուքն ալ միասին սարսափեալ
եւ գունաթափ խուսափել կը փորձեն եւ
սրահին անկեան մը մէջ կը սալարին:

Յայնժամ ես կը միջամտեմ, կ'ըսէ, եւ
կը յուշարարեմ որ այն երկիրներու կալուա-
ծատէրն եմ եւ կը հրաւիրեմ որ գան եւ
քիչ մը հանգչին ապարանին մէջ. հոն բա-
զում երեւակայական ըմպելիքներ արբեա-
լէ յետոյ կը թմրին, ու քուն կ'ըլլան, յոր-
մէ կ'սթափեցունենք զանոնք աչաց վրայ
փշելով:

Ակնբաց քնաչըլութիւնը կը դադրի կամ
ենթակայն զարթնելով կամ իրեն վիճակը
փոխելով:

Ակնբաց քնաչըլիկն աչքերը գոցելով,
կրնամք ակնիմակ քնաչըլութեան վերածել.
երբ կափուցումն աւելի երկարատեւ լինի
եւ միեւնոյն ժամանակ զլսոյ վերեւը ճըն-
շում մը ընեմք, իսկոյն քնաթմբութիւն տե-
ղի կ'ունենայ:

Այս վերջին վիճակը կը ծնի նաեւ աչաց
վրայ ուժգնապէս փշելով: Արդ պարտ էր
մեզ յարեւ նաեւ քնէութեան կարեւորա-
գոյն մասին, այնինքն քնաչըլութեան մէջ
տեղի ունեցած յուշարարութեանց վրայ եւ
որոյ պիտի յանգիմ յետագայ եւ գուցէ
վերջին յօդուածովս:

ՏՕՔԳ. ՊՈՂՈՍ ԷՄԻՐՁԵ

ՍԻՍԱԿ ԵՒ ՍՈՍՈՒՆ (7)

ԲՆՈՒԹԵԱՆ ՍՈՒԱԿՆԵՐ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՔԵՐ)

Ի.

Թարվէզ հանգումն եւ Գեղեցիկն երեկոյ
Վարդ խաթունին գիշեր բարի ըսելէ և Սո-
սունընմա յանձնէլէ ետք, մէկ տեղ առա-
ջինի տունը գնալով ննջեր էին. բայց հե-
տաքերիւ էին Սիսակի մասին. չուտով ելնել-
նուն պէս աղբււր գնացին ուրկէ ջուր առ-
նելու եկած էր եւ Սոսունն. ո՞վ կրնայ նը-
կարագրել այն բերկրանք զոր զգացին այս
ազնիւ ամազունք, որոց միջեւ մի այնպիսի
ներքին կապ կար որ գիտես թէ մէկ հոգի
էին դարձած: Կը մերձենան իրարու, կը
գգուեն մէկմէկ ու կը պատմեն իրենց այն
գիշերուան մնացած մասին անցուցած կեանքն:

քնն: Աղբիւրի ճանապարհը Սիսակի ննջա-
րանի պատուհանի տակէն կ'անցնէր. Սո-
սուն՝ իւր ջրի սափորն ուսն առած, ժող-
տուն դիմօք, յամր եւ խորհրդաւոր քայլե-
րով կ'անցնէր Սիսակի պատուհանի տակէն:
Իսկ Սիսակ՝ բոլորովին առողջ, բոլորովին
զուարթ պատուհանի առջեւ կեցած սկիզ-
բէն մինչեւ վերջը զանոնք էր դիտած, ու
գլխու շարժումներով զիրար մէկ քանի ան-
գամ բարեւած:

Եւ այսպէս քանի որ Սիսակն իր ննջա-
րանէն չ'էր հեռացած եւ իր անցած հի-
ւանդութիւնը չ'էր նորոգուելու համար՝ գոր-
ծի չ'էր սկսած, մէկ քանի օրեր՝ յաճախ
Սոսուն նորա տեսութեան առջեւ շարժման
մէջ էր: — Զուր կը տանէր, ոչխարները
կը կթէր, գառներ կը մակալէր —, այն-
պիսի տեղեր՝ ուր կը հայէր Սիսակն ու կը
կաղզուէր: Նորա առողջական վիճակն:

ԻԱ.

Մեր հայրենեաց այն երկիրներն՝ ուր
երկրի գրից բարձրութեան եւ լեռնային
չղթայների անհամար մեծ ու փոքր օղակաց
զուգորդութեան պատճառաւ ձմեռը կարի
երկար ցրտաբեր եւ շատ անգամ ալ մահա-
բեր կը լինի հէգ ձմեռորդաց, դարուն ալ
խիստ զուարճայի եւ քնքուշ երեւոյթ մը
կ'զգենու՝ ապրիլի կէսէն ց'ունիսի վերջ:

Հիւսնալի է իրօք բնութեան թարմու-
թիւնն եւ գեղեցկութիւնն այդ եղանակին
երկրի նոյն մասանց մէջ: Դատ հետաքրքիր
էի տարուան շորս եղանակի մէջն ալ տես-
նել եւ ամենաբարձր տեղէ մը դիտել Ան-
տիտաւորսի օղակաց խորհրդը կազմող այն
աշխարհքն որոյ ներքին փայլն ու շողը կը
թնդացնէր երբեմն հզօր աշխարհակալաց
թագը: Կորդուք՝ որ իր կորդ երկրի հսկայ
եւ երկաթասիրտ սերնդեան գարշապարաց
տրոփման արձագանք կը տար, որում
պատմութիւնն եւ հնախոյնութիւնն ալ
վկայ են ցարդ, այժմ՝ այդ երջանիկ ժո-
ղովրդեան խոր գուժին լինելու հարկին է
ենթակայ: 1886 մայիսի հասուն եւ քաղցր
օրերէն մի գեղեցկագոյն առաւօտ պատ-
րաստած էինք արդէն լեռնային պտոյտի
մը յատակագիծ: Անվերջ տենչ մը կը կրծէր
մեր սիրտ, ինչպէս գործողութեւ ծնօղի մը
սէր, սիրելի կարօտ զաւկի մը միտքը: Այնչ-
քէն մինչ վերջ ձմեռայնիս է սարսափելի ել
եւ էջ, ձիու եւ կառքի տեղ՝ արեւս եւ
լուսնի՝ կը ծառայեն մեզ: Արշալոյսը դեռ
նոր սկսած էր իր կենսատու լուսոյ մանուկ
ձառագայթներն արձակել: Հիւսնային մեզ-
միկ սիւքն Մասիսի սրտէն բղխելով Ալ-
թամուրայ ծովէն մաղուելով կուգար լնու
ամեն վայր՝ ներքնջելով քաջառողջ կեանք
երկրի մահկանացուաց: Ժամակուշ Մառտիկ՝
արթննալով առաւօտեան «Զարթիւր» եր-
գող պիլզուլի եւ զուժիւրի՝ կաքաւի եւ
տատարակի սիրանուգ ալելուներէն, իր
ձեռք բռնած մի բոլորակ փոքրիկ զանկ՝ կը
զարնէր առաւօտեան ժամը թռչնոց դայ-
լայլիկին հետ խիստ ներգանակ: Այդ ձայն
կը հասնի նաեւ մեր ականջին ու մենք կը
թոթուենք մեր անկողինը, դուրս կուգանք
թիզանու Եղեգիս գիւղէն, կ'անցնինք Հար-
բենց գիւղն եւ իր լեռնային վայելչու-
թիւնը. մեր առջեւ լեռ է եւ մեր ետեւ
խորը՝ կը բարձրանանք ու կը բարձրանանք

1) Կանեփի թելէ ու այծի մազերէ կ'օղկի
ձեւով հիւսուած տեսակ մը սանաման՝ զոր
կը գործածեն ընդհանրապէս Հայաստանի
լեռնականք:

չորս ժամէն աւելի յարատեւութեամբ: Ամ-
պերը շատ մօտ կը թուին մեզ ու ահագին
երկիր մը որպէս մի գաշտակ: Սինէգրի
Ձէնիթի սրածայր մի քարի վրայ ենք, որոյ
հանգչող շինուած է խարխուլ կերտուած
մի հիւղակ եւ նորա մէջ կապուած է յոյժ
փոքրիկ մի օրորակ¹⁾ (ճղոր): Այդ հիւղակն
է ուխտաւորի շրջակայ հայ, քուրդ բարե-
պաշտից եւ օրորակը նշան խորհրդաւոր
գուշակութեանց: «Սինէ գըր» կամ «Սինն
գըր» կարելի է թարգմանել «Սինն» կամ
«Սուրբ սար», եւ արդէն տեղացիք ալ այդ
լեռան գագաթէն վար ծոծրակի վրայ եղող
մէկ երկու գերեզմանները ցոյց տալով՝ կը
պարծենան պատմել թէ՝ դոքա ննջարան-
ներ են այն միանձանց՝ որոնք մեկուսացած
են երբեմն այս լեռան վրայ եւ յաւիտե-
նականութեան համար անքուշ եւ անհան-
գիստ ձգնած: Այս պատճառաւ կը յար-
գեն այդ հսկայ լեռն որ եթէ հին ատեն
լինէր՝ բնապաշտից դար պիտի անուանէ-
ինք ու իրենց ամենէն կարեւոր երգումն
եւ հաստատութիւնն այդ լեռը դարձած է
եւ իր անունն: Ամեն տարի Վարդապետին
հոն կը հաւաքուին շրջակայ հայ եւ քուրդ
գեղովներն ու կը մորթեն բաւական զո-
հեր: Դատ անգամ ալ այդ լեռան վերա-
բերումով նոյն երկու պղծաց մէջ կը բա-
ցուին է՛ք եւ Կոյն անմիտ մէ՛ծեր:

ԻԲ.

Սինէ գըր լեռան բարձրութիւնը ճշգ-
պէս չափուած չէ. երեք հազար մէթրէն
աւելի կարելի է գտնել: Ամեն տարի հին եւ
նոր ձիւն նորա վրայ իրար կը խառնուի.
շատ գեղեցիկ եւ շատ վեհ տեսք մ'ունի:
Ամառը Վասպուրականը, Տուրքիան
մեծ մասն եւ Բնուսեանց ծովն արեւելեան
եւ հիւսիսային կողմերէ, մինչեւ Սղերդի,
Բօհտանի եւ Մոկաց բարձր ու յողմական
լեռները միւս կողմերէ խիստ պարզ կը
նշմարուին: Այս բարձրութեան մակարդա-
կէն ու քերթն եւ արագէն հորիզոնէն երբ
դիտէ մէկը այն աշխարհն որ պնդուած է առ
երեւոյթ ինչպէս մի այրիացեալ չքնաղ կոյս,
որպիսի՝ մտածմանց եւ գգացմանց ուղիւն-
ներ կուգան կազմել նորա սրտին այնպի-
սի կոհակներ զորս ձեռքել անցնիլ մեղէն
սրտի գործ չ'է:

Այս փառահեղ լեռան արեւելահարաւի
սրահն, մի ահագին ապառաժի ծերայէ կը
բղխի պաղ եւ կաթնահամ յորդակ մը, ո-
րոյ վճիտ եւ արծաթափայլ վտակը միացած
հանգոյն քաջ հօր մը հարազատ զաւկե-
րուն կ'երթան թանալ այն սոսեաց սաղար-
թագեղ ծառերի պուրակը՝ զոր տեղացիք
կը կոչեն «Պրակ». այդ պրակէն բխի մը վեր,
հպարտ Սինէ գրի ալ բազկի ներքեւ շին-
ուած են քանի աւելի պարզ հիւղիկներ՝
ոյք տեղական բառերով կը կոչուին «խղեր»
ահա՛, այս է Հ. գիւղի լեռնարօտի եւնող
ոչխարաբոյժ կանանց եւ օրիորդաց բնա-
կութեան տեղերը: Հոս եկեր գտեր են
Սիսակն եւ Սոսուն մէկմէկ շատ ատեն՝ ոյց
մտին պիտի շարունակեմ հաղորդել մեր
քաղած իրական տեղեկութիւնները:

ԻԳ.

Անցած էր Սիսակի եւ Սոսունի վերջին
տեսութեան վրայ մի շարաթ, Յունիսի
կիսուն հասեր էին, գիւղացիք իրենց խա-

1) Այս օրորանի մէջ ուխտաւորները քար
մը կը ձգեն. եթէ քարը մէջը կենայ եւ
ինքը շարժի, ուխտը կատարուած է:

չանց հետ լեռնարօտ կը տեղափոխուին:
Սիսակ քաջառողջ կազմուածքով վեր կեցած
էր արդէն, ինչպէս դարձնի հնոցէն հան-
ուած սուր եւ փայլուն երկաթը:

Տանուտէր Սիրունի տնէն Վարդ խաթուն
եւ Սոսուն այն տարին ոչխարաց հետ լեռնա-
րօտ երթալու եւ տարեկան կաթնեղէն պա-
շարը պատրաստելու ընտրուած էին: Այս
ընտրութիւն՝ մի այնպիսի զուգորդակու-
թիւնն էր Սիսակի անձկանաց որ, գիտես
թէ գիտմամբ մէկը միւսին էին յարմար-
ցուցած: Կան պարագայներ որոյ կը նպաս-
տեն դէպքերն որպէս շոգին որ կը զօրա-
ցընէ շոգեշարժ մեքենայի ոյժերն: Այսպէս
էր նաեւ Սիսակի եւ Սոսունի լեռնարօտ
երթալու պատեհութիւնը: Պ. Մկրտիկ կին
Նարգիզ խաթունը կը հիւանդանայ այն օ-
րերի մէջ. տան մէջ այլ եւս յարմար մէ-
կը կարելի չ'էր գտնել այս պաշտօնին:
Մկրտի խորհուրդ կը հարցնէ իր եղբայր
Յարօյին, նոյն տարի լեռնարօտ մէկն յղե-
լու մասին: Յարօյի զբաղումն եւ մտա-
ծումն էր արդար երկրագործութիւնն եւ
արհեստի նախնական երեւոյթի ներքեւ
այնպէս յմաստասիրած եւ սերտած էր այդ
ճիւղն՝ ոչխարաբուծութեան արհեստին հետ
որ, այս նկատմամբ մեծ անուն եւ համբաւ
հանած էր երկրի մէջ, այնպէս որ եթէ մէկը
գովել կամ իր ջանից մէջ աղէկ ներկայա-
ցընել ուզէին «Կարծես Խաչերէնց Յարօյի
առջեւն է խաղացեր» կ'ըսէին: Յարօն իր
մասնագիտութեան թելադրութեամբ խոր-
հուրդ կուտայ մեծ եղբօրն՝ այն տարուան
լեռնարօտ երթացողը Գեղեցիկն եւ Սի-
սակ լինին, որովհետեւ անոնց աշխուժու-
թիւնն եւ ուղիւնքները ծանօթ էր ի-
րեն: Մկրտի որ առ-տնին եւ տնտեսակն
գործերի մէջ միշտ իր եղբօր կարծիքը յար-
գէն օգտակար եւ բանաւոր նկատած էր,
այս կէտին մէջն ալ նոյն ուղիւնքները կը
պահէ: Գուրս կ'ընէ Մկրտի տնէն այն
պարագային երբ Սիսակը բա՛ն թելին վը-
րայ դրած եւ իր հայկական գգալը միա-
կողմանի դէպի ալ շեղակի դրած՝ մեղմիկ
եւ մեղմաղմիկ երգելով այնպիսի կտորներ
որոնք իւր սրտին էին ճիշդ յայտարարն,
վար կ'իջնէր այն ցորենի արտը ջրէյն՝ ո-
րոյ շուրջ պարփակող անհամար տնկոց եւ
թփոց յանկուցիչ հովանիքը մերթ Սոսունի
հրեշտակային երգոց հետ կը զովացնէին Սի-
սակի երկթացեալ սրտիկը:

Պ. Մկրտի «Գովս եկէ, Սիսակ» կ'ըսէ:
Սիսակ որդիական պատկառանաց համես-
տութեամբ մ'իւր հօրը ներկայանալով նորա
հրամանին կ'սպասէ:

Վաղ իրիկուան պահուն դու եւ քո քոյր
Գեղեցիկը՝ պատրաստ լինիք մեր գիւղա-
ցիներին հետ լեռնարօտ երթալու: Գիտէք
որ այս տարի ձեր Նարգիզ հիւանդացաւ,
Յարօն ձեզմէ զատ ուրիշ մը յարմար չը
գտաւ:

Դատ լաւ, հայրիկ, սիրով կ'ընդունիմ
կատարել ձեր հրամանն ու կը հաւատամ
որ Գեղեցիկն ալ համամիտ է իմ այս ըզ-
գացման:

ԻԴ.

Յորեկուան ջերմութիւնը մեղմած եւ
ժամ տասին մօտենալու վրայ էր, կը մեկնէին
տակաւ առ տակաւ Հ. գիւղի լեռնարօտի
գնացողները, մէկը իր ուս կ'առնէ մ'առած
միւս ուտեստ եւ բարձած: Սիսակն ու Գե-
ղեցիկ, ուրախ եւ զուարթ ձամբորդելու
կը պատրաստուէին ու անդադար իրենց
զոհէն անցնող լեռնարօտի ձամբան կը դի-

տէին, Սոսունի մայրն արդէն իր տկարութեան համար բաւական կանուխ ծամբայ ելած էր։ Սոսունը մէկ քանի մանր ու մուկներ բաները վերցնելու պատրուակաւ ետ մնացած էր։ Գեղեցիկն որ իր հոգեհանգիստը եղբորմէն աւելի հետամուտ էր Սոսունի ընկերութեան, կը տեսնէ նորա անցը ու իր եղբորը խորհրդաւոր նշաններով իմաց տալով զայն, կը մեկնին։

Շատ չեն հեռանար գիւղէն, պաղորակ եւ կարկաշտաւ վճիտ աղբիւրի մ'առ ընթերցողները ուսնելու մը կազմուցին հովանիի ներքեւ՝ կը գտնեն զՍոսուն՝ այնպէս չընաղ եւ գեղատեսիլ, որպէս անուշ եւ գրաւիչ մայիսի առաւօտեան նորաբաց վարդը։

Սոսունին է Սոսուն. ու առանձին են նաեւ Գեղեցիկն եւ Սիսակ։ Արդէն այս էր իրենց այդ օրուան ծրագրի նպատակը։ Կը մտնեն անմեկնելի սիրով մ'իրարու ձեռքն. ալ բառեր չեն գտներ որ ձօնեն մեկմէկու իրենց բարեւները։

Ինչպէ՞ս մինակ հոս նստած էք կ'ըսէ Սիսակ, դուք չէ՞ք վախճար։

Միթէ մինակ կը կարծէք զիս, չէ՞ք գիտեր որ, ուր ալ ձեր պատկերը եղնիմ, յիշողութեան մէջ ինձ ընկեր եւ միտքս կը գտնեմ, կը պատասխանէ Սոսունը։

Ըսէ՛ք դուք երազներով կ'օրօրուիք, եւ օր մ'ալ չուտ ուտի խաբուիք, կ'ըսէ Սիսակ։

Ձարմանալի բան. միթէ այն ամեն տարփալիները, որոնք երբեմն կը բացուին ծաղկի նման եւ կը ձգտին իրացնել բնական այն ամենամեծ տենչը՝ զոր նախախնամութիւնն իր մատամբ մահկանացուների մէջ դրած է, ու երբ երաշտութեան տարիներին մահն, անյաղող սարադայիներ կը չընալատեն զիրենք, այդ չէ՞ նոցա վիճակը։ Ճշմարիտ է որ ըսած են թէ սոխակը վարդին սիրահար է, բայց աւելի ճշմարիտ է չեղտել թէ, անմեղ սիրոյ անչէջ կրակով տոշորուող անբիծ կոյսի մ'անարատ սիրտն՝ իւր ցանկալի երիտասարդի սիրանուագ գեղգեղին աւելի սիրահար է։ Եւ ի՞նչ, միթէ դու այդ փորձը չե՞ս տեսներ ի բեզ... ինչո՞ւ պառկեցաք անցեալ եօթնեկին... քանի՜ երախտապարտ ենք թարմէզ հանումին եւ մեր սիրելի քոյր ազնիւ Գեղեցիկն. եթէ նոցա ճշմարիտ բարեկամութեան դարմանները չը հասնէին մեզ, կը կարծե՞ս որ սեւ գերեզմանէն ազատէինք դու եւ ես... ահ, Սիսակ, արդեօք ուրիշ գա՞յ մի օր ժամանակ, որ իրականացած տեսները մենք մեր նպատակ։

Սիսակ՝ որ զինովի մը պէս մերթ խընդալով մերթ կատակով եւ մերթ պաղ տրիւնով կը լսէր այս խօսքերն ու կ'զմայլէր Սոսունի սիրանոյն նայուածքէն եւ մոգիչ ձայնէն, ո՞վ կրնայ պատմել թէ ի՞նչպիսի անուրջների մէջ էր...

Գեղեցիկն իր գեղեցկագոյն սրտով ու մտքով կը բերկրէր եւ իր սիրելի եղբոր երջանկութեան մասնակից էր... բայց նկատելով որ եթէ գործն անոնց մնայ՝ խընդիրը զինովութեան կատարեալ հետեւանքը պիտի ստանայ, ծամբայ եղնելու ոյժ կուտայ, այսպէս խօսելով։

Սիրելիք իմ Սիսակ, քո ուրախութիւնը միայն է իմ փառք, քո երջանկութիւնն իմ կեանք, ու զիտես որ քեզի գերի եղող քոյրդ՝ իր սրտի մէջէն կը խօսի այդ ամենը, բայց այսու ամենայնիւ ի՞նչ պարագայի մէջ ալ լինի մարդ թէ յաջող

կամ անյաջող, խոհականութիւնը ձեռքէ թողնելու չէ։ Դու մոռցա՞ծ ես մեր հօր այն խրատն որ կուտար քեզ շարունակ։ «Աղէկ կ'ընէ ժամանակի յարգը»։ Մենք մեր այս օրուան պատեհութիւնն այսպէս վայրկեանական անուրջներով կ'որսնցնելու չենք. այս օրը մի անկիւնաքար պիտի լինի ձեր կեանքի երջանիկ օրերին եւ խոհականութիւնն ունենանք։ Հոս նստելով եւ միշտ խօսելով մեր դերին օգտակար գիրք մը չը պիտի կրնանք ունենալ. եթէ մեր դրացիներէն մէկն այս կողմէն անցնի եւ տեսնէ զմեզ, ի՞նչ պիտի ըսէ... ոտքի ելէ՛ք, արդէն երեք ու կէս ժամու ծամբայ ունինք եւ ժամանակն ալ ուշ է։ մէկ քալենք եւ մէկ խօսէ՛ք...

Ղ. Պ. ՇԱՀԱՊԵՏԵԱՆ

(Շաբաթակէ)

Ք Ա Ղ Ո Ի Ա Ծ

Շ Ա Բ Ա Թ Ա Կ Ա Ն Լ Բ Ո Յ

Հոկտ. 31-ն 9

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Մընչէ՞ք փոքր խորհուրդ կուտայ Անգիոյ՝ բացօթյապէս յարիւ Գերմանիոյ, Աւստրիոյ եւ Իտալիոյ երբեակ դաշնակցութեան, ի դերեւ հանելու համար Ռուսիոյ եւ Ֆրանսայի պատերազմական դիտումները։

— Սեւ ծովու ուս նաւատորմին աճման պատճառաւ, Սեւաստոփոլի նաւահանգիստն, իբրեւ նաւային առանձնակարգ կայան, կը վերաշինուի այն կարեւորութիւն զոր ունէր Խրիմու պատերազմին ժամանակ։ Սեւաստոփոլի այժմեան առեւտրական նաւահանգիստը բոլորովին նաւատորմին եւ զինուորական սալապանութեան յատկացած լինելով, առեւտրական նաւուց համար մօտերն ուրիշ նաւահանգիստ մը սահմանուելու վրայ է։

— Պուլկարական գործոց համար սկսեալ ընկերակցութիւնը կայուն վիճակ մ'ունին այս պահուս։ Բ. Դրան վերջին որոշումն էր չըրջաբերականաւ մը Պերլինի դաշնագրին ըստօրագրող տէրութեանց հաղորդել Ռուսիոյ հակառակարկներն որք ծանօթ են արդէն։ Պուլկարական գործոց համար կազմեալ նախարարական յանձնաժողովը տեղեկագիր մը մատուցած էր ի կայս. պալատն, այդ չըրջաբերականի առաջումն առաջարկող, սակայն մինչեւ այս ուրբաթ ելած չէր այդ պաշտօնագրոյ առաջումն հրամայող կայսերական իրաւէն։

— Քեապուլէ կը հեռագրուի թէ 30 ռուսահպատակներ, Սէյտ Եագուպ Ալիի հրամանաց ներքեւ, Հերադ մտեր են իբրեւ վաճառական։ Կառավարիչը կասկածելով այս մարդոց վրայ, գործն իմացուցեր է Էմիրին, որ յանձնարարէր է նմա՝ բանակցել Մուրդապի ռուսական կառավարիչ Միր Ահմէտ Խանի հետ, յորմէ պատասխանի կը սպասուի։ Հերադի շուրջ զինուորական պատրաստութիւններ կը կատարուին, ռուսական յարձակման մը ի նախատեսութիւն։

— Գերմանիա կը շարունակէ իւր ջանքեր, գերմանացիներ համար Ալգաս Լոռէնի Ֆրանսացիներն եւ Բողէնի Լեհերը։ Վիլհէլմ Կայսեր մէկ նոր հրովարտական ու

ժող, այսուհետեւ դասախօսութիւնք առանց բացառութեան գերմաներէն պիտի լինին Բողէնի Լեհաց դպրոցներուն մէջ։ Պերլինի Կառավարութիւնը կը ձգնի ո՛չ միայն բարոյապէս ու մտաւորապէս, այլ եւ նիւթապէս գերմանացիներ զերուսիական Լեհաստան, քանի որ իրմէ կարգեալ յատուկ Յանձնաժողով մը կը շարունակէ իւր ձեռքն անցունել Լեհաստանի այդ մասին ամեն տրամադրելի հոգերն ու կառուածները՝ գերման գաղութականաց բաժնելու համար։

— Նայե Ֆրայե Բրէսէի Լոնտոնի թղթակիցը կը հեռագրէ թէ տեսակցած է ռուս գրեականագէտի մը հետ, որ ըսեր է թէ «Ռուսիոյ մէջ ամեն դասեր կը բաղձան Ֆրանքո-ռուս դաշնակցութեան մ'ընդդէմ Գերմանիոյ, եւ Ձարին խաղաղասէր տրամադրութեան պատճառաւ միայն խաղաղութիւն կը պահպանուի»։

— Ռիւզէր Բեքստրոպի հոկտ. 7 թըւով հետեւեալը կը հեռագրէ Հայազգի Պ. Դէլեանովի մասին։

«Կրթական խիստ դուրսիւնը զոր հըռ. չափեց հանրային կրթութեան նախարար Պ. Դէլեանով իւր վերջին շրջաբերականներով, ի մասին աշակերտաց ընդունելութեան եւ ուսանողութեան՝ դասական Գիմնազիոններու եւ Համալսարաններու մէջ, ոչ միայն ընդհանուր դժգոհութիւն պատճառեց հասարակութեան մէջ, այլ եւ նոյն իսկ պահպանողական ակումբներու մէջ այդ նախարարի դէմ աննպաստ շարժում մը սկսեալ յառաջ բերել։ Ռուսիականութեան վարչութիւնն եւս գէշ աչքով կը նայի Պ. Դէլեանովի հաստատած կրթական նոր կանոններուն, նախարարին կողմէ Բեքստրոպի Համալսարանին ուղղեալ շրջաբերականին ոյժով այս տարի սովորականէն աւելի մեծ թուով ուսանողաց արտաքսման պատճառաւ։ Այդ կերպիւ ռուսիականութիւնը կորուսած է քանի մը հարիւր երիտասարդաց հետքն, որոց վրայ հսկողութիւն ի դործ գնել աւելի դիւրին պիտի լինէր եթէ Համալսարանին մէջ մնային։

«Հաւանական կը համարուի որ Պ. Դէլեանով պաշտօնանկ լինի տարւոյս վերջը»։

Ն Ե Ր Ք Ի Ն

Սրտածննդի տեղեկութիւններ եկած են Զէթուհի հրկիզելոց կրած տառապանաց վրայ։ Այս մերկ, անպատսպար եւ սովատանջ արկածելոց մէջ այլ եւ այլ համաճարակ հիւանդութիւնք սկսած են կոտորած ընել։ Տեղւոյն վրայ գըտնուող իշխանութիւնք եւ պատուիրակը անմիջական օգնութիւնք կը հայցեն։

Գոհութեամբ կը ծանուցանենք թէ Ներքին գործոց նախարար Վսեմ. Միւնիլը փառաւորութեամբ զգացմունք հանրածանօթ են, այս հեռագրաց վրայ, պէտք եղած տեղերն անմիջական հրամաններ ղըրկած է, որպէս զի տասն հազար արծաթ մէծիտիւն նպաստ զրկուի Զէթուհի արկածելոց։ Ն. Վսեմութիւն բարեհաճած է նաեւ ծանուցանել որ եթէ այս դուռար բաւական չը լինի, նոր նպատակներ զրկուի համար պէտք եղած միջոցները ձեռք պիտի առնուին։

— Դատական նախարարութեան երկտայն մէջ խնայողութիւնք պիտի լինին ի մէջ այլոց, Դատական նախարարութեան

Հուգուգի եւ պատժական գործոց Տնօրէնութիւնը եւ նոցա դիւանը պիտի ջնջուին եւ բացը մնացած պաշտօնեայք մայրաքաղաքիս դատարանաց մէջ պաշտօնի պիտի կոչուին : Նոյնպէս իրարու մօտ եղող գաւառաց վերաքննիչ տեսանք եւս պիտի միացուին :

— Պառոն տը Հիւն՝ որոյ միակ որդին Պ. Լիւսիէն տը Հիւն մեռաւ քանի մ'ամիս առաջ, Իսրայէլեան Միութեան (Alliance Israélite) նուիրած է հարիւր միլիոն ֆրանք, պայմանաւ որ այս գումարի տոկոսն յատկացուի յիշեալ ընկերութեան նպատակին աւելի ընդարձակ հիման մը վրայ գործադրութեան :

Իսրայէլեան Միութիւնն, ինչպէս յայտնի է, նպատակ ունի հրէից մէջ դաստիարակութիւն ծառայել եւ Հայոց Միացեալ Ընկերութեանց նման հաստատութիւն մ'է, թէեւ աւելի ընդարձակ սահմանի մը մէջ, որ վարժարաններ բացած է աշխարհի ամեն կողմն ուր որ դաստիարակութեան կարօտ հրեայներ կը գտնուին :

Հարիւր միլիոն ֆրանքը մօտաւոր հաշուով չորս ու կէս միլիոն ոսկի ըսել է . արդարեւ իշխանավայել նուէր որ կը լինի ի նըպաստ դաստիարակութեան գործին եւ որուն նմանը բնաւ տեսնուած չէր ցարդ :

— Մարտիրոսյէն առնուած հեռագիրը մը կը ծանուցանէ թէ Արիսդիք պէյ Պալթածի մետեր է այդ քաղաքի մէջ : Հանգուցեալն երրորդ որդին էր վախճանեալ էմանիւէլ Պալթածի, որոյ մեռնելէն յետոյ, ընտանեացը թողած ժառանգութեան բաշխումն իրեն մնաց : Ապա, կայս. կառավարութեան ծառայութեան մտնելով, 1866ին Բարիզ դրկուեցաւ փոխառութեան մը վրայ քանակեցելու համար : Վերադարձին, Պէտքերէնի եւ Թարապիոյ թաղապետութեանց նախագահ անուանուեցաւ : Վերջոյ Բարիզ ուղեւորած էր անձնական փառապանքները դարմանելու համար եւ մայրաքաղաքս վերադառնալու պահուն է որ Մարտիրոսյէն մէջ մեռեր է :

— Գոհութեամբ կը ծանուցանենք թէ Սալիսէի աստիճան տրուեցաւ Օսմանեան կայս. Պանքայի պաշտօնատարներէն Տօմինեան Մեծ. Մեսրոպ Էֆէնտիին :

— Գօլանի նորընտրի կառավարիչ Հասան պէյ, որ երկու ամիս է վեր մայրաքաղաքս կը գտնուէր, հրաման ստացած է անմիջապէս իւր պաշտօնատեղին ուղեւորել :

— Անգլ. դեսպան Սըր Ուիլիէմ Հուայդ վերջերս Բ. Դրան ուղարկութիւնն հրաւիրած էր իւր ստացած ինչ ինչ տեղեկութեանց վրայ, թէ Մախսուսէի շողեւաւք երբեմն գերիներ կ'ընդունին Ափրիկէի հիւսիսային նաւահանգիստները փոխադրելու համար : Արտաքին գործոց Վսեմ. նախարարն հաւատած է Անգլիոյ դեսպանին թէ կայս. կառավարութիւնը քննութիւն մը պիտի բանայ նշանակեալ իրողութեանց մասին եւ ի հարկին պէտք եղած միջոցները ձեռք պիտի առնու ափրիկեան եղբարց վըրայ գերեզմանն արդիւնէլու համար :

— Վերապահութեամբ կը հրատարակենք զորոյ մը, թէ ծխախոտի Բէժիի արտօնատեարց ժողովներուն մէջ որ ի Բարիզ եւ Վիեննա, Բէժիի ընկերութիւնը լուծելու խնդիր յարուցուեր է եւ թէ այս անգործ առաջարկներ պիտի ներկայացուին ի խոյս կայս. կառավարութեան :

(Ա. Է. Լ. Բ. Է.)

— Ներկայ տարւոյ յունիս 1 էն մինչեւ

սեպտեմբերի վերջը գաւառներէն Կ. Պոլիս. հասած են 440 սնտուկ ափրոն, մինչդեռ նախորդ տարւոյ միևնոյն ժամանակամիջոցին հասած էին 1445 սնտուկ :

— Ռօտտոյէն եկող ուղեւորք կը պատմեն թէ երկուշաբթի գիշեր ժամը հինգին տասներկու գինեալ աւազակներ ի Մալկարա բնիկ Ռօտտոյէն Պոյաճեան Մկրտիչ աղայի ագարակին վրայ կը յարձակին եւ առեւանգելով Մկրտիչ աղան, որ հիւանդ էր, լեւը կը տանին : Աւազակը 1,000 ոսկի վրկանք կը պահանջեն եղբր իրենց գերին ազատ թողլու համար :

— Սէլանիկի համանուն թերթը կը ծանուցանէ թէ նահանգին շրջակայ Պօկրոչ գիւղին մէջ ածուխի ընդարձակ հանք մը գտնուեր է : Եղած քննութիւնը հաստատեր են թէ այդ հանքածուխ մեծ առաւելութիւններ ունի անգլիական հանքածուխերուն վրայ : Այդ հանքածուխ պիտի կրնայ բաւել օսմանեան պետութեան պիտոյից : Այդ հանքն երկաթուղւոյ գծէն մէկ հազարամետր եւ Սէլանիկէն երկաթուղով երկուքուկէս ժամ հեռաւորութիւն ունի որով փոխադրութիւնն ալ խիստ զիւրի է :

— Կայս. կառավարութիւնը ծանուցանելով առ Պ. Գուշտուրիողի, հելլենական դեսպանն ի Կ. Պոլիս, թէ հելլենական զորակ կրող բանի մը փոքր շողեւաւքներ ծովափատակութիւն կ'ընեն Աշիլիդագոսի մէջ, հրաւիրած է զնա իւր կառավարութեան ուղարկութեան յանձնել այս իրողութիւնը : Պ. Գուշտուրիողի պատասխանած է Բ. Դրան թէ հելլենական կառավարութիւնը պէտք եղած միջոցները ձեռք առած է այդ ծովահէններն հալածելու եւ ձերբակալելու համար :

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Եւդոկիոյ առաջնորդական տեղապահ Արթ. Սահակ վարդապետի կողմէ ի Պատրիարքարան հասած հեռագիրը մը կը ծանուցանէ թէ բանտէն արձակուած են այն հայ երիտասարդներն որք բաւական ժամակ առաջ ձերբակալուած էին ամբաստանուած լինելով իւր թէ իրենք եղած լինէին հեղինակներն այն գրութեանց որք, Եւդոկիոյ փողոցներու մէջ պատերը փակցուած էին, տեղային վարչութեան դէմ :

— Ամեն. Ս. Պատրիարք Հայրը մէկ քանի տարի առաջ իւր անձնական քսակէն բանի մը չէնքեր շինել տալով ի Եփրատ, Երուսաղէմի վանուց նուիրած էր զայն :

Ն. Ամենապատուութիւն այս անգամ եւս Ս. Յակոբայ ծանօթ գետնոյն վրայ յերուսաղէմ, իւր անձնական քսակէն ըսկած է կառուցանել տալ չէնքեր, որոց շինութեան համար կանխաւ ստացած է կայս. Իրաւէ մը : Այդ չէնքեր, որոց շինութիւնը բաւական յաջողութեամբ առաջ տարուած են, դարձեալ Ամեն. Ս. Յարութիւն Ս. Պատրիարք Հօր կողմէ նուիրուած են Ս. Յակոբայ վանուց :

— Կրթական Տեսչութիւնն, որ թաղային վարժարանաց բարեկարգութեան Հրահանգին տրամադրութեանց համաձայն հսկողութեան իրաւունք մ'ունի թաղերու մէջ հաստատեալ մասնաւոր վարժարանաց վրայ, իւր այս իրաւունքն ի գործ դնելու համար պէտք ունենալով նախապէս տեղեկանալ թէ մայրաքաղաքիս մէջ որքա՞ն մասնաւոր վարժարաններ կան, շրջաբերական մ'ուղղեց մայրաքաղաքիս բոլոր թաղ. Խորհրդոց՝ յանձնարարելով որ բարեհաճին անյայտ տեղեկագրել թէ իւրաքանչիւր թաղի մէջ աղգային անհատից կամ ընկերութեանց կողմէ հաստատեալ բանի մասնաւոր վարժարանք կան, ի՞նչ կարգի կամ աս-

տիճանի վարժարանք են, ի՞նչ ուսմունք կ'աւանդեն, մինչեւ քանի տարեկան աշակերտ կ'ընդունին եւ ի՞նչ սեռէ, ո՞րք են հիմնադիրք կամ տնօրէնք : Կրթական Տեսչութիւնը միանգամայն յանձնարարեց թաղ. Խորհրդոց որ սոյն տեղեկութեանց հետ իրենց դիտողութիւններն եւս յայտնեն յիշեալ վարժարանաց մասին :

— Արթ. Վահան վարդապետ Տ. Մինասեան Կրօնական Ժողովոյ մատուց տեղեկագիր մը որ իւր ի կորնթոս ըրած այցելութեան արդիւնքը կը պարունակէր : Ժողովը շնորհակալութիւն յայտնեց Տ. Վահան վարդապետին եւ որոշեց այդ տեղեկագիրը խառն ժողովոյ ներկայել :

— Ազգ. Վարչութիւնը մտադիր է շըրջուն այցելու հովուութեան պաշտօն մը հաստատել Միջերկրական կղզեաց, Կորնթոսի եւ հելլենական այլ քաղաքներու համար ուր բնակող ազգայինք գրկուած են հոգեւոր միջթարութեան :

— Մեծ. Տիմիդրիոս Էֆէնտի. Չոլաքիտի, Հայաստանեայց Եկեղեցւոյ Պատարագի Խորհուրդն յունարէնի թարգմանած եւ ներկայած էր Կրօնական Ժողովոյն՝ որ խիստ գոհ մնալով իւր ներկայութեան հրաւիրեց զՏիմիդրիոս Էֆէնտի եւ շնորհակալութիւն յայտնեց նորա այս գնահատելի աշխատութեան համար : Ամեն. Ս. Պատրիարք Հայրն եւս իւր հայրական օրհնութիւնները տալով քաջալերական խօսքեր ուղղեց նմա : Ժողովն որոշեց Պատարագի Խորհրդոյ սոյն յունարէն թարգմանութիւնն յանձնել Հիւնքեարպէյէտեան Արթ. Տ. Յովհաննէս Աւագ քահանային ի բաղդատութիւն :

— Կրօնական Ժողովն իւր վերջին նստին մէջ Կարնոյ համար առաջնորդական ընտրելեաց եռանուն նոր ցանկ մը պատրաստեց եւ Գաղատիոյ Էլմալ կոչուած տեղին համար քահանայացուի մը ձեռնադրութիւնըն արտօնեց :

— Էջմիածնէն կը գրեն մեզ .

Վեհ. Կաթողիկոսը սեպտեմբերի 15ին երեքշաբթի երեկոյ Բիւրականի ամարանոցէն Էջմիածնայ Վեհարանը դարձաւ : Սինողի անդամներէն Ներսէս, Սարգիս եւ Մամբրէ եպիսկոպոսներն յատկապէս զնացեր էին Վեհ. Հայրապետին ընկերանալու : Միարանութիւն եւ Ճեմարանի ուսուցիչք եւ աշակերտք, եւ Վաղարշապատի իշխանութիւնը եւ զխաւորք դիմաւորեցին զնա, եւ յաջորդ առաւօտուն ներկայացան ի համբոյր Աջոյն : Իւրաքանչիւր խմբի յատուկ յանձնարարութիւններ ըրաւ իրենց պարտուց վերաբերմամբ : Վեհ. Կաթողիկոսի հանգիստն եւ առողջութիւնը լաւ է :

— Ատանայէն Աղգային Պատրիարքարան հասած տեղեկութիւնը կը ծանուցանեն թէ Մոնղոլիոյն անուն Ամերիկացի միսիոնար մը մարդորսական նպատակի կը ծածայեցնէ Անգլիայէն եւ Ամերիկայէն մարդասիրաբար սովելոց նուիրեալ դրամներն եւ թէ նպատից հետ քարոզիչներ զրկելով շրջակայ հայաբնակ գիւղերն, ի կրօնափոխութիւն կը հրաւիրէ կարօտեալ ժողովուրդն :

— Երզնկայէն կը գրեն սեպտեմբ. 24 թուականաւ .

« Ամսոյս 21 ի կիրակի գիշերը քսանի չափ աւազակը Մեծն Ս. Ներսէս Հայրապետի վանուց պարսպին մի մաշած կողովը քակելով ներս կը մտնեն եւ վանուց բոլոր դիւրատար ինչքերէն ի զատ նաեւ կը տանին սրբազան անօթները, մասունքները, հին մատեանները եւ . ասոնց մէջ նշանաւոր եւ նուիրական հնութիւններ ալ ունէին : Ս. Սկիհն 1168 թուական կը կրէր, այսինքն 720 տարի առաջ շինուած էր եւ մեծագին էր : »

Guerlain de Paris.

15, Rue de la Paix.

ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԿԸ ՅԱՆՁՆԱՐԱՐԵՆԻ ՀԵՏԵՒԵԱՆ ՀՈՏԱԻՏ ՆԻԻԹԵՐԸ Eau de Cologne Impériale. Saponets, օճառ արդուզարդի համար, Ambrosial cream, օճառաւ գուշ ամիւր մարդու համար. Crème de Fraises մորթը կալուցանելու համար. Poudre de Cypres զովացնելու եւ ճերմկանելու համար մորթը. Stilboideֆայլ տալու համար մազերուն եւ մորու. զովացնելու եւ ճերմկանելու համար մորթը. Eau Athénienne et Eau lustrale հոտ խնկելու եւ մաքրելու համար գլուխը. Alcoolat de Cochlearia ակուայներու համար. Eau de Chypre արդուզարդի համար. Թաշկինակի համար հոտաւէտ նիւթեր. Héliotrape, Pao Rosa, Shore's caprice, Maréchale Duchesse, Marie Christine.

13-26

Հ Ն Չ Ա Կ

Կ Ա Մ

Հ Ա Ի Ա Ք Ա Ծ Ո Յ

ՉՈՒԱՐՃԱԲԱՆՈՒԹԵԱՆՑ

ՏԵՐ ԵՒ ԽՄԲԱԳԻՐ

ՏԻՐԱՆ Գ. ՓԱՓԱՋԵԱՆ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

Կը հրատարակուի ամեն ամսոյ 10 ին, 20 ին եւ 30 ին: Վեցամսեայ 18 թերթեր հատոր մը կը կազմեն:

Տարեկան երկու հատորի բաժանորդագիրն է Պոլսոյ համար 20 դահեկան. Գաւառաց համար թղթատարի ծախքով 27 դահեկան.

Վեցամսեայ մէկ հատորի բաժանորդագիրն է Պոլսոյ համար 10 եւ Գաւառաց համար 14 դահեկան.

Ձեռքէ կը վաճառի թերթը 30 բարայ լրագրավաճառաց եւ մասնաւորապէս Պահճէ գարու ջրավաճառ. Պոլսոյ Լիզայի քով: 1255 1-5

ՊՈՂՈՍ Յ. ՃԻՆՃԻՋԱՆԵԱՆ

ՄՇՏՆՁԵՆԱԻՐ

ՏԱՐԵՑՈՅՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

(Հարժածեւ տախտակ)

Բռնադատութիւն. — Նախարան. — Մեծ շրջանի մը (552 տարի) տարեգիրք. — Աղիւսակը՝ յորա նշանակեալ են ամեն տարւոյ շարժական տօներն, միջոցներն (օրական եւ շաբաթական) եւ հարսանիք. — Հրնարք. — Եօթներեակը. — Կրկնակը. — Այսօր ամսոյն քանի՞ն է. — Ամսամուտ. — Օրագիր. — Անգրէտեան ձայնագիր. — Աղիւսակ Գաղմ-Պարսկէտէ. — Պարզառումար օրացոյց՝ հոնքերձ շարժական մասամբք տուրք:

Յորմէ բաղմաղիմի պարագայից մէջ՝ Քչու կրնան օգտուիլ ամեն կարգի ազգայինք եւ մանաւանդ ԸՆՏԱՆԻՔ, եւ որ կրնայ ծառայել նաեւ իբրեւ օգտակար զարդ ինչ սենեկաց, գրասենեկաց, վարժարանաց եւն:

Վաճառման կեդրոնատեղին է Գալաֆեան գրատուն, Չաքմաքճըլար - Եօթուշու, թիւ 20: Գին 5 դահեկան:

1174 6-8

ԱՌԱՋԻՆ ԳԻՐԳ

ԳԱՂԻԵՐԷՆԷ Ի ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

Յօդէն. Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Վաւերացեալ ի Պատ. Ուսումնական Խորհրդոյ Ազգ. Կեդր. Վարչութեան

Մեծանուն հեղինակին սոյն գործն, արդիւնք երկարժամանակեայ փորձառութեան,

միակն է իւր տեսակին մէջ նիւթոց ընտրութեան, զանազանութեան եւ կարգաւորութեան նկատմամբ, ուր աշակերտը դիւրաւ եւ ինքնին կը յառաջանայ դիւրինէն ի խրթինն, գիտցածէն չգիտցածին եւ այս անգգալապէս եւ առանց ճգան:

Ի դիւրութիւն ուսանողաց առաջին երկու մասանց մէջ ամեն դասի վրայ դրուած են գաղղիերէն բառերն իրենց արտասանութեամբ եւ նշանակութեամբ. ասկէ դատ գործոյն վերջը յաւելցուած է նաեւ առանձին բառարան մը ամբողջ գործոյն մէջ պարունակեալ բառերուն:

Կեդրոնատեղին է Գ. Պաղտատեան գրատունը, Կ. Պոլիս Յակոբեան խան թիւ 14: Կը ծախուի նաեւ բոլոր գրավաճառաց թով ի գին 4 դր:

1170 8-10

Վասն Արտօնատեան Տնօրէն-Պատասխանատու Ս. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐ. ԱՐԵՒԵԼԻՔ ԵՒ ՄԱՍԻՍ ԼԵԱԳՐԱՑ



ՄԵՏԵՄ. Ս. Ա. ԱԼԼԷՆԻՆ

ԵՇ ԽԵՐԷՆՈՒՆՈՒՄ. ՄԵՐ. ՆՈՐՈԳԻՐԸ

(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER)

Շերմակ ընկած մազերուն գոյն, վերնիձ ու գեղ կուտայ: Կը նորոգէ անոր կեանքը. ոյժը եւ աճումը: Գլխու թեփը շուտ մը անկրկնութիւնէ: Իր անուշ հոտը առատ է ու հեշտալի:

“Սէկ շեշը կը բաւէ:” Եւ փորձը ունեցան ամենքը որոնցմիտք ունած մազերը իրենց բնական գոյնին դարձան, եւ ճաղատ տեղերը մազով ծածկուեցան:

“Երկ չէ. եւ ամենեւին զեան մը չընք: Թէ որ կուզես թարմ մազ ունենալ եւ բոլոր կենացդ մէջ պահել, առանց ուշանալու շեշ մը ստացիր ԳԵՐԷՆՈՒՆՈՒՄ. Ս. Ա. ԱԼԼԷՆԻՆ (MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կոյնպէս Բարիզ ու Նիւու Եօրք: Կը վաճառուի ամեն սափրիչներու, անոյշ իւղագործներու եւ անգղիացի դեղագործներու քով:

Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանգիւր եղբայր բրիտանական գեղարան, Բերա, Մեծ փողոց. Էտմընտ Բարուան, Անգլիական միջերանոց, Նիւքսթը Գալտըրըմ. եւ Իգլիտօր Լագանտէլա 435, Բերա Մեծ փողոց:



ՀԵՐՄԵՆԵԿԵՆ ԾԵՂԱԿԵՐՈՒՆԸ

ԳԵՂԱԿԵՐՈՒՆՈՒՄ. ՄԵՐՄՆՈՅ ԳՈՅՆԵՐ. ՄԵՐՍ ԾԵՂԱԿԵՐՈՒՄ. ՄԵՐՍ ԾԵՂԱԿԵՐՈՒՄ:

Ընդամուտն մը փորձը պիտի համոզէ ամեն Տիկին թէ որչափ գերազանց է այս ուրիշ ամեն հեղանիւթներէ եւ բազմաթիւ փոշիներէ: Ընային անգամ գործածելով ալ, որ քանի մը վայրկեանի գործ է, պիտի տեսնուի իսկոյն որ երեսը, վիզը, թեւերը եւ ձեռքերը պիտի առնուն անոյշ փափկութիւն մը եւ մարմարինի փայլ, հանդերձ շուշանի եւ վարդի գունով եւ բուրմամբ: Սապոնի գրգռիչ յատկութիւնները կը հանդարտեցուն: Ընհետ կ'ընէ մորթի սեւութը, երեսի եւ ձեռքի ցանկերը, արեւայրութիւնը, եւ ուրիշ ամեն բրտութիւն եւ բժաւորութիւն: Եւ այս ամեն բանով անկարելի կ'ընէ մասնուել թէ արհեստով գեղեցկացուած է:

Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կոյնպէս Բարիզ ու Նիւու Եօրք: Կը վաճառուի սափրիչներու, անոյշ իւղագործներու եւ անգղիացի դեղագործներու քով:

Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանգիւր եղբայր բրիտանական գեղարան, Բերա, Մեծ փողոց. Էտմընտ Բարուան, Անգլիական միջերանոց, Նիւքսթը Գալտըրըմ. եւ Իգլիտօր Լագանտէլա 435, Բերա Մեծ փողոց:



ԿԵԱՆՔ. ԱՃՈՒՄՆ Ե ԳԵՂ ՄԱՋԵՐՈՒ:

ՄԵԼԼԵՐՈՒ

ՄԵՐՍԵՐՈՒ ՄԵԼԵ ՀԵՏԻՆ ՆՈՐՈԳԻՐԸ

Իրապէս իրենց առջի թարմ գոյնին կը դարձունէ ձերմըկած կամ գունաթափ մազերը. Կը դադրեցունէ անոնց թափելը. Կը մաքրէ գլուխը, կը վերջացունէ թեփը, ու մազերուն նոր կեանք, աճումն, փայլ ու գեղեցկութիւն կուտայ:

Կը վաճառուի երկու չափով՝ մեծ շեշերու մէջ: Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կոյնպէս Բարիզ ու Նիւու Եօրք:

Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանգիւր եղբայր բրիտանական գեղարան, Բերա, Մեծ փողոց. Էտմընտ Բարուան, Անգլիական միջերանոց, Նիւքսթը Գալտըրըմ. եւ Իգլիտօր Լագանտէլա 435, Բերա Մեծ փողոց:

